11030385

ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳԻՏԱԿԱՆ

ԿԱՐՈԼՈՍ ԺԵ· ԹԱԳԱՒՈՐ ՇՈՒԵՏԱՑ

ԿԱՐՈԼՈՍ ԺԵ. ԹԱԳԱՒՈՐ ՇՈՒԵՏԱՑ

Յետ հնգետասան ամաց արժանաւոր թագաւորութեան, անցեալ տարւոյն սեպտեմբերի 18ին կը մեռնի յանակնկալս վաղահաս մահուամբ՝ Կարոլոս Շուետաց թագաւորն, Ցանիմարքայէն դառնալու ժամանակ, ուր այցելութեան գնացեր էր իր միակ դստերը, ամուսնացելոյ Դանեաց արքայութեան թագաժառանգին հետ։

Կարոլոս Շուետաց առաջին կարգի թագաւորաց մէկն պիտի համարուի, և անունը պիտի մշտնջենաւորի անմոռաց նոյն ժողովրդեան տարեգրութեան ու պատմութեան մէջ, 'ի յիշատակ իր մեծաճիգն եռանդեանն առ 'ի բառնալ զնշխարս աւատական իշխանութեան՝ որ մնացեր էր տակաւին Շուետաց քաղաքական կարգաց մէջ։

Կարոլոս իր թագաւորութեան ատեն այս արդիւնքն իսկ ունեցաւ, որ միշտ հետամուտ եղաւ'ի մի թագաւորութիւն շաղկապել բոլոր սկանտինաւեան ազգերը, և զայս ոչ բռնութեամբ կամ պատերազմաւ, այլ խաղաղութեամբ ու համոզմամբ, պատրաստելով նախ երեք ազգերն առ այս, զՇուետս, զՆորվեկիացիս և զՑանիմարքացիս, դաստիարակութեամբ ու սկզբանց համաձևութեամբ, և մանաւանդ 'ի մի խառնելով երկուց տէրութեանց Շուետի ու Ցանիմարքայի շահերն՝ արքունական ընտանեաց ազգախառնութեամբ։ Բայց իր այս ջանիցը պնդապէս ընդդէմ յարեան գլխաւորապէս Նորվեկիոյ կուսակալութիւնք, որոնք իբրև նուիրական ինչ այնպէս կը յարգէին իրենց վաղեմի Սահմանադրութիւնը. և չէին ուզեր դպչիլ անոր, թող թէ եղծանել զայն։ — Կարոլոս ուրիշ առաջարկութիւն մ'ալ ըրաւ խորհրդարանին, այն է ջնջումն օրինաց մահուան, բայց չյաջողեցաւ ու մերժուեցաւ։

Թէպէտ ձախորդ գնացին Կարոլոսի մտաց խորհուրդներն ու ջանքն, բայց այնու հանդերձ չեմք երկբայիր կոչել զնա վերանորոգիչ ազգին, այնու մանաւանդ որ իր հաստատամտութեամբն յաջողեցաւ վերջապէս յետ բազում ջանից, եղանակաւորել քաղաքական վաղեմի կարգադրութիւնքը, փոխանակելով 'ի տեղի վաղեմի տէրութեանց ազգային ներկայացուցումն, այսինքն՝ ճշմարիտ Սահմանադրութիւն ներկայացուցչական։ Եւ այս եղաւ յամին 1866, որ Կարոլոսի ԺԵի զլխաւոր գործոց մէկն է, և իր երկրին պատմութեան, ինչպէս ժողովրդեան մտացը մէջ, իբրև անմոռաց գործ մը պիտի յիշատակուի։

Այս վերանորոգութիւններն՝ որոց հետամուտ էր Կարոլոս՝ կը պաշտպանէր և օրագրաց մէջ, և առաւելապէս բանակին վերանորոգութեան խընդիրը. բայց և ասիկա իսկ ընդունելի չեղաւ խորհրդարանին. և այսպէս առանց ամբողջապէս 'ի գլուխ տանելու իր ազդօգուտ փափաքներն, յանկարծահաս մահուամբ վախճանեցաւ, թողլով յաջորդ իր եղբայրն, որ բարձրացաւ յաթոռ Ոսկար Բ. անուամբ, ծնեալ 'ի Սդոքոլմ յամին 1829 յունուար 21, և էր երրորդ որդի Ոսկարի Ա. թագաւորին Շուետաց, որ ընտիր դաստիարակութիւն մը տուաւ իր որդւոցը, ջանալով տպաւորել անոնց մատաղ սրտին մէջ սէր գիտութեան, դպրութեան և արուեստից։

ԱՆԳԼԻԱՅԻՆ ՑԱՓՐԻԿԷ

ՊԱՏԵՐԱԶՄ ՈՍԿԻՈՑ–ԱՓԱՆՑ. — ԱՇԱՆԴՊ

Եւրոպական տէրութեանց քաղաքականութեան ապագայ վիճակը քանի մը տարիէ 'ի վեր սպառնական կերպարան կ'առնու։ Եթէ Արևմտեան կոչեցեալ ազգաց երկրին ու աշխարհին անձուկ սահմանէն դուրս ելլալու ըլլալք, կը գտնեմք շրջապատեալ զայն շատ աւելի յընդարձակածաւալ բարբարոս աշխարհաց, որ կ'երևի թէ ուրիշ կերպով պիտի չի կարենան հաս-